№ 147 Շաբաթ Դեկտեմբերի 26 1887 Շաբաթ Դեկտեմբերի 26 № 147

ՏԱՍՆ ԵՎԵՍՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԵԿՈՂ 1888 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դիմում ենք մեր թղթակիցներին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գրքեր հրատարակելու խնդիրը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիական մամուլը և Բիսմարկ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.— ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ՖԵԼԻԵՏՕՆ.

ԴԻՄՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

—

Այժմ, երբ տարին վերջանում է, մենք անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ուղղել մեր Թղթակիցներին։ Նախ պարտաւորութիւն ենք համարում մեր ի սրտէ շնորհակալութիւնը յայտնելու մեր ամեն տեղի Թղթակիցներին, որոնք համակրելով „Մշակին“, տարիների ընթացքում տոկուն կերպով աշխատակցում են մեր լրագրին, հարստացնելով նրա էջերը օգտաւէտ տեղեկութիւններով, որոնք շատ անգամ հարուստ նիւթ են տալիս մեզ ընդհանուր եզրակացութիւններ դուրս բերելու մեր երկրի այլ և այլ երևոյթների մասին, միջոց են տալիս թէ մեզ և թէ մեր ընթերցողներին ծանօթանալ երկրի կարիքների հետ և ուսումնասիրել երկիրը։ Ապագայ սերունդներն էլ, թերթելով „Մշակի“ համարները, անշուշտ իրանց համար շատ նիւթ պիտի գտնեն երկրի անցեալ դրութեան հետ ծանօթանալու և անցեալից ապագայի համար դաս առնելու։

Զը խօսելով այն մեր աշխատակիցների մասին, որոնք ընծայում են մեր լրագրին մշակված ինքնուրոյն յօդուածներ, այլ և այլ բանասիրականներ, վէպեր և այլն, որոնց գրուածների մասին մենք ասելիք չունենք, քանի որ այդ տեսակ գրուածները „Մշակի“ զարդն են կազմում, սահմանափակենք մեր խօսքը գաւառական Թղթակցութիւնների վրա, որոնց նիւթն է մեր երկրի այլ և այլ տեղերից ընթացող երևոյթների հաղորդելը։

Անտարակոյս որ այդ տեսակ Թղթակցութիւնները ամեն քաղաքական Թերթի համար, ուրեմն նմանապէս և „Մշակի“ համար մեծ հարստութիւն են կազմում, բայց այստեղ մի նշանաւոր կէտի վրա կուզենայինք մեր Թղթակիցների ուշադրութիւնը դարձնել։ Շատ անգամ պատահում է, որ Թղթակիցը, լաւ չուսումնասիրելով այն հարցը, որի մասին գրում է, բաւական ճիշդ տեղեկութիւններ հաւաքած չը լինելով այն երևոյթների կամ անցքերի մասին, որոնց վերաբերմամբ հաղորդում է լրագրին,—դժգոհութիւն է յարուցանում այն հասարակութեան մէջ, որի մասին գրում է։ Պէտք է աշխատել այդ կողմից շատ զգոյշ լինել, նախ ուսումնասիրել ճշդութեամբ հարցը, կշռել ասածները, լաւ ծանօթանալ խնդրի հետ և ապա գրել։ Եթէ ոչ, ինչպէս և մի քանի անգամ պատահել է, անճիշդ կերպով հաղորդված տեղեկութիւնները համ իրան Թղթակցի, համ էլ լրագրի վարկն են կոտրում, որը անկարող լինելով ստուգել հեռու տեղից հաղորդածը, միամտաբար զետեղում է Թղթակցութիւնը։

Մենք ստիպվեցանք այդ տեսակ նկատողութիւն անել տարվայ վերջում, ի նկատի ունենալով գաւառական Թղթակցութիւնների բարձր նշանակութիւնը ամեն մի Թերթի համար։ Կամենալով բարձր պահել Թէ լրագրի, և Թէ մեր Թղթակիցների բարի անունը և նշանակութիւնը, մենք մեր Թղթակիցների առանձին ուշադրութիւնը դարձնում ենք այն հանգամանքի վրա, որ միմիայն անկողմնապահութեամբ, անձնական կրքերից, անձնական շահերից հեռու մնալով կարելի է օգուտ բերել հասարակութեանը տպագրական խօսքով։ Եթէ ոչ, կողմնապահութեամբ, անարդար կերպով, անձնական շահերից դրդված յարձակվելով այս կամ այն գործող անձի վրա, շատ անգամ օգտաւէտ հասարակական գործիչներն էլ յետ են մղվում հասարակաց գործունէութիւնից, փախչելով հասարակաց ասպարիզի վրա գործելուց։

Ի հարկէ, մեր ասածները և մեր ղգուշացնելը չեն վերաբերվում մեր այդ Թղթակիցներին, որոնց գրիչը և գրելու ձիրքը արդէն փորձված են, բայց նորերին և անփորձներին, որոնց դիտաւորութիւն ունեն հրապարակական ասպարէզը մտնելու, և որոնք դուցէ և ոչ չար դիտաւորութեամբ յափշտակվում են երևոյթների արտաքինով, առանց խոր կերպով դիտելու երևոյթները և ճշդութեամբ ու մանրամասնաբար ուսումնասիրելու հասարակական եղելութիւնները։

Ամենից առաջ և ամեն հարցում՝ անկողմնապահութիւն,—ահա այն դրօշակը, որ Թղթակիցը երբէք չը պէտք է վայր դցի իր ձեռքից։

Վերջացնելով մեր խօսքը, կրկին և կրկին մեր անկեղծ շնորհակալութիւնն ենք յայտնում „Մշակին“ համակրող մեր ամեն տեղի եռանդոտ, տոկուն, անխոնջ և հասարակաց օգտի գործին նուիրված, մեր լրագրին տարիներով աշխատակցող Թղթակիցներին, խնդրելով որ ապագայում էլ, մեզ հետ միասին ձեռք ձեռքի տուած, շարունակեն անկեղծ կերպով գործել ընդհանրութեան օգտի համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐՔԵՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

—

Տարին լրացաւ, և Թիֆլիսի «Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը» համարեա ոչ մի բանով չապացուցեց իր գոյութիւնը։ Կարծէք այդ ընկերութեան այժմեան վարչութիւնը վրճռել է մոռցնել, մոռացնել տալ այդ ընկերութեան գոյութիւնը և անունը, ամբողջ տարվայ ընթացքում ոչ մի աչքի ընկնող գործ չը տեսնելով, և նոյն իսկ դադարեցնելով ընկերութեան ժողովները, հաշուետուութիւնը և այլն։ Գրքերի հրատարակութեան ընկերութեան վարչութեան այդ ընթացքը մանաւանդ անտերելի է այն պատճառով, որ նրա գոյութիւնը և գործունէութիւնը ներկայումս աւելի քան անհրաժեշտ է, երբ մի շարք հրատարակութիւններ, որոնց լոյս տեսնելը անհրաժեշտ է, նիւթական միջոցների են կարօտ։ Վաղուց է արդէն, որ յարուցված է ժողովրդական գրքերի հրատարակութեան հարցը, և եթէ մինչև այժմ այդ հարցը չէ գործադրվում, դրա միակ պատճառը նիւթական պատրաստ միջոցներ չունենալն է։ Եթէ Բարեգործական ընկերութիւնը և նրա Շուշու ճիւղը իրանց իրաւունք են համարում չարժել ժողովրդական գրքերի հրատարակութեան հարցը, և յետ կանգնել այդ մտադրութիւնից, այդ մասամբ նրանց ներելի է, քանի որ նրանց սուղ միջոցները ուրիշ նպատակների համար էլ կարելի է գործադրել. բայց նոյնը չէ կարող անել «Գրքերի հրատարակութեան ընկերութիւնը», որի միակ նպատակը այդ է, և որը բարոյական իրաւունք չունի իր աչքերը խփել այնպիսի ժողովրդական գրքերի անհրաժեշտութեան առաջ։ Նոյնը կարելի է ասել և մի շարք ուրիշ հրատարակութիւնների մասին, որոնց անհրաժեշտութիւնը այժմ զգացվում է։ Տարաբաղդաբար, մինչ մի կողմից «Գրքերի հրատարակութեան ընկերութեան» օգնութիւնը անհրաժեշտ է երևում, միւս կողմից, այդ ընկերութիւնը փոխանակ իր միջոցները շատացնելու և փոխանակ աւելի եռանդ և գործունէութիւն ցոյց տալու, աւելի է ընկնում, և իր անգործունէութեամբ ինքն իրան մոռացութեան և արհամարհանքի է դարձնում։ Զը պէտք է մոռանալ և այն, որ մոռացութեան տրված այդ ընկերութեան այժմեան անտերոյթ ղեկավարները այնպիսի անձինք են, որոնք սովորութիւն ունեն ամեն բանի մէջ և ամեն տեղ մեղադրել ժողովրդի անտարբերութիւնը և սառնութիւնը, որոնք սովորութիւն ունեն ամեն բանի անաջողութեան պատճառը ժողովրդին համարել, անդադար կրկնելով. «Ժողովուրդը չէ համակրում, անդամներ գրվող չը կան, գրքերը չեն վաճառվում, ինչ կարելի է անել»։

Այդ և այդ տեսակ գանգատները «Գրքերի հրատարակութեան ընկերութեան» կողմից, անկա-

---

Ֆ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

Տարվայ վերջը և պակները.—Մեր աշխատակցի կարծիքը սիրոյ վրա հայոց վէպերում.—Սէրը մեր իրական կեանքում.—Մի զարմանալի պատասխան.—Ամուսնութիւն և որդեծնութիւն.—Մի էջ մեր վիպական գրականութիւնից.—Կենդանութիւն ասների պատճառով.—Թիֆլիսի վաճառանոցը.—Այս տարվայ ձմեռը.—Երկաթուղին և Բաքու քաղաքը.—Շնորհաւոր նոր տարի.

—

Նկատված է, որ երբ տարին վերջանալու վրա է, պակները շատանում են։ Այն օրիորդները, որոնք ամբողջ տարին ապարդիւն կերպով սպասում էին փեսացուին, տարվայ վերջը բաղդ են ունենում իրանց համար մարգացու գտնել. երիտասարդներ, որոնք ամբողջ տարին տատանում էին ամուսնական կապեր կապելու, տարվայ վերջը մէկ անգամից վճռում են ընտանեկան կեանքը մտնելու և չտապում են կապել ամուսնական կապերը....

Բայց մեր մէջ ամուսնութիւնները չեն ծագում սիրոյ ղգացմունքից, այլ մեծ մասամբ նիւթական հաշի վրա են հիմնվում. կամ պակվող ղոյգերը վճռում են կեանքի մէջ այդ նշանաւոր քայլն անելու, որովհետև մի անգամ հօ պէտք է պակվել....

* * *

Զը գիտեմ, մեր յարգելի աշխատակից պ. Լէօ, որտեղ է գտել մեր հայոց գրականութեան մէջ բօմաններ և վէպեր, որոնց մէջ նկարագրված լինէր երիտասարդական սէր.... Այդ տեսակ ինքնուրոյն վէպեր հայերէն լեզուով, եթէ ֆրանսերէնից կամ գերմաներէնից թարգմանված չեն, ես չեմ ճանաչում։ Սէրը մեր վէպերում մեծ մասամբ այնպէս է նկարագրված, ինչպէս նա ճշմարիտ կայ մեր կեանքի մէջ՝ հաչող, նիւթապաշտ, կամ անտարբեր։ Ամուսնութիւնը մեր երիտասարդների համար մի շահաւէտ ձեռնարկութիւն է, իսկ մեր օրիորդների համար՝ մի պարտաւորութիւն է։ Օրիորդը դրա համար է ստեղծված, որ վերջ ի վերջոյ կիներ ու մայր դառնայ, ուրեմն մի և նոյն չէ, թէ ում հետ կը պըսակվի.... Միայն թէ տղան քիչ թէ շատ ապահոված լինի։

* * *

Այդ կարծիքը թէ կինը միմիայն որդեծնութեան համար է ստեղծված, բաժանում են և ոմանք մեր հոգևորականներից։ Նորերումս մի հայ երիտասարդ կամենում էր պակվել մի այրի կնոջ հետ։ Նա այդ մասին խնդիրք է տալիս իր քաղաքի տեղական հոգևոր իշխանութեանը,—և ինչ պատասխան է ստանում։ Ցիշեալ քաղաքի տեղական կոնսիստորիան պատասխանում է նրան հետևեալը։

«Որովհետև ամուսնութիւնը սահմանված է որդեծնութեան համար, իսկ յիշեալ այրի կինը ամուլ է, ուստի հարկ չը կայ նրա հետ պակվելու»։

Ցեսնում էք, որքան գործնական ժողովուրդ ենք մենք։

* * *

Ցարին վերջանում է, և ամենքը չտապում են պակվել։ Բայց այնպէս հեշտ չէ լինում մեզանում պակվել. մենք գործնական ժողովուրդ ենք, մենք սէր չենք ընդունում, այլ մեր ծնողները այն աստիճան ղգոյշ են, որ նախ քան իրանց համաձայնութիւնը տան, դեռ լաւ կշռում են փեսացուի ու նշանացուի նիւթական միջոցները, նախահաշիւ են անում....

* * *

Մի երիտասարդ, դիցուք մի վարժապետ կամ մի մանր պաշտօնեայ, մի գեղեցիկ առաւօտ ներկայանում է աղջկայ հօրը։

—Պարոն, ես խնդրում եմ ձեր աղջկայ ձեռքը, սկսում է խօսել երիտասարդը, ես նրան շատ եմ սիրում, ես ծանօթացայ նրա հետ հայոց կլուբում, այնուհետև տեսնվում էինք և կրուժօկում...

—Դուն ո՞վ իս, պարուն-ջան, անվրդով հարցնում է աղջկայ հայրը, ինչ գործի մարդ իս։

—Ես պաշտօնեայ եմ, ծառայում եմ այս ինչ պաշտօնատեղում։

—Ինչքան տօնլուղ իս ստանում....

—Տարեկան 800 ռուբլի, բայց իմ մեծաւորը խոստանում է ինձ շուտով 1,000 ռուբլի դարձնել ռոճիկս։

—Չէ, աղբեր, էդ չեղաւ։ Դուն 1,000 մանէթ իս ստանում, աղջիկս էլ 10 հազար մանէթ բաժինք ունի, որ շատ շատ հազար մանէթ տոկոս կը բերի։ Հիմի դուն, որ խելօք մարդ իս, մէ ինձ ասա՝ տարեկան երկու հազար մանէթով ինչ կապրէք։ Ախար կլուբն էլ, կրուժօկն էլ կուզիք գնալ, լաւ բնակարան վարձել, մի երեք, չորս ծառայ պահել.... Էդ բոլորը ծախս կուզի թէ չէ։ Իժում երեխերք աչխարհ կուգան, պահել կուզի նրանց.... Չէ աղբեր ջան, ինձ ձեռք չի տայ....

—Բայց, պարոն, ես սիրում եմ ձեր աղջկան....

—Է՛հ, սէրը որն է. կուլի աղջիկս քեզ չի սիրում.... փուղ որ չունենաք քէֆով ապրելու, էլ ինչ սէր կը դիմանայ. չէ, աղբեր, մտեմէդ հանի էդ պակը։

* * *

Ահա մի էջ մեր գրվելի վէպերից. ուրիշ սէր չը կայ մեր մէջ, կամ ուրիշ տեսակ ամուսնական իդէալ շատ հազւագիւտ է մեզանում։ Մեզանում

բելի է չը նկատել, միանգամայն անհիմն և անարդար է։ Ասեցէք խնդրեմ, ինչպէս կարող է նոր անդամներ ունենալ այն ընկերութիւնը, որը «չինչով իր գոյութիւնը չէ ցոյց տալիս, որը մոռացութեան է տրված ոչ թէ միայն այն պատճառով, որ ոչինչ նոր և ուշադրութեան արժանի հրատարակութիւններ չէ անում, այլ և այն պատճառով, որ ոչ մի միջոցի չէ դիմում և չէ էլ ցանկանում, որ հասարակութիւնը իրան յիշի, իրան օգնի։ Ժողովներ չեն լինում, ընկերութեան գործերի դրութիւնը ոչ ոքին յայտնի չէ. տպագրած գրքերը փտում են խոնաւ նկուղներում. հաշիւ չէ տրվում հասարակութեանը,—ուրեմն էլ ուր պէտք է երևայ ընկերութեան վարչութեան կենդանութիւնը։ Կանոնադրութեան զօրութեամբ ընկերութիւնը կարող է կազմել թատրոնական ներկայացումներ, կոնցէրտներ, դասախօսութիւններ՝ իր եկամուտները մեծացնելու համար. արդ, դրանցից որը արեց ընկերութեան վարչութիւնը, մի ամբողջ տարվայ ընթացքում։ Եւ ոչ մէկը։

Ուրեմն ինչ պէտք է անել, այդ ընկերութեանը փոքր չունչ և հոգի տալու համար։ Ուրիշ ելք չը կայ. պէտք է դումարել ընկերութեան ժողովը. ծանօթացնել հասարակութեան գործերի դրութեան հետ, և ընտրել նոր այնպիսի վարչութիւն, որը հասկանար այն տարրական ճշմարտութիւնը, թէ հասարակական գործի մէջ մտնել և ոչինչ չանել,—այդ սրբապղծութիւն է.... Այդպիսի արտաքոյ կարգի ժողով կարելի է կազմել, համաձայն կանոնադրութեան, եթէ մի առաջարկութիւն լինի, ոչ պակաս քան քսան և հինգ անդամների ստորագրութեամբ։ Բայց արդեօք ընկերութիւնը այժմ ունի Թիֆլիսում քսան և հինգ անդամ....

ՆԵՐԻՒՆ ԼՈՒՐԵՐ

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Լուրեր են տարածվում որ մայիս ամսից սկսած սպիտակ նաւթի վրա կը դնվի նոր հարկ, պուդին 40 կոպէկ։»

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ որ այս օրերս այդտեղ վախճանված տիկին Մարիամ Աբելեանցի մարդը և իր որդիքը, հանդուցեալի յիշատակին նուիրեցին 50 ռուբլի բարեգործական նպատակով, փոխանակ հոգեհաց սարքելու։ Դա լաւ օրինակ է ժողովրդի մէջից շռայլ ծախսերը վերացնելու համար։»

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են։ «Այս տարի դպրոցական գործը բաւական աջող է գնում Ախալցխայում, քանի որ մենք ունենք մի հմուտ և փորձված աւագ ուսուցիչ, որ լինելով և լաւ մանկավարժ, ամեն կերպ օգնում է ուսուցիչներին։ Ուսուցիչների մէջ նկատվում է համերաշխութիւն, որ պէտք է վերագրել աւագ ուսուցչի ազդեցութեանը։ Հոգաբարձութեան յարաբերութիւններն էլ ուսուցիչների հետ ամենևին այնպէս լարված չեն, ինչպէս «Մշակի» № 141-ի մէջ հաղորդել էին ձեր լրագրին։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքում տիրում է այժմ բկացաւը, որ մեծ զոհեր է տանում անխտիր ամեն ազգութիւններից։

—

Օդէսայի գաւառական զեմստվոյի ներկայացուցիչները նորերումս դիմեցին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը, խնդրելով թոյլ տալ, որ այդ գաւառի մեծ գիւղերի դպրոցներին կից կազմակերպվի ժողովրդական ընթերցանութիւն։ Ժողովրդական լուսաւորութեան պ. մինիստրը, ինչպէս հաղորդում են Օդէսայի լրագիրները, այժմ յայտնել է Օդէսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, որ ըստ համաձայնութեան ներքին գործերի մինիստրութեան և և ս. սինոդի աւագ-պրօկուրորի, անկարելի է համարված բաւականութիւն տալ յիշեալ խնդրքին։

—

Դեկտեմբերի 28-ին, երկուշաբթի օր, երեկոյեան ժամը $7^1/_2$-ին կը կայանայ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ժողովը կը լսի պ. Շաղինեանի զեկուցումը «Կաթնատնտեսութեան մասին», և ի միջի այլոց կը քննի 1888 թվի նախահաշիւը։ Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք։

—

Մեզ հաղորդում են, որ շուտով Թիֆլիսում, պալատի շինութեան մէջ, բացվելու է պատկերահանդէս, որից ստացած օգուտը պէտք է յատկացվի այստեղի նկարչական դպրոցին։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեր թղթակիցը գրում է մեզ։ «Կենսական ամենահարկաւոր պիտոյքների գները այժմ հետևեալներն են։ Ալիւրը կարելի է ճարել միայն ջրաղացներում, լիտրը 40 կոպէկով, թխած հացի փունտը 3 կոպէկ արժէ, ոչխարի մսի փունտը 5 կոպ., տաւարի մսի փունտը $4^1/_2$ կոպ., հալած իւղի փունտը 30 կոպ., 7 ձուն 5 կոպէկ։»

—

ԲԱԳՈՒԻ պ. Տէր-Գրիգորեանցի ծխախոտի գործարանից ստացանք հետևեալ հերքումը մեր լրագրի № 144-ի մէջ տպված լուրի առիթով։ «Տէր-Գրիգորեանցի և ընկ. ծխախոտի գործարանում միշտ մեծ խնամքով են պատրաստում ծխախոտը և այդ ծխախոտը մեծ քանակութեամբ առնվում է ոչ թէ միայն Բաղուի մէջ, բայց և ուրիշ երկիրներ է արտահանվում, օրինակ Դաղստանի կողմերը։ Բայց եթէ պատահում է, որ մեր գործարանի անուն կրող ծխախոտը վատ է լինում, այդ ծխախոտը կեղծ է և մեր գործարանից չէ, այլ միայն մեր էտիկետն է կրում։ Շատերը սկսեցին այժմ կեղծել մեր ծխախոտի էտիկետները կամ իրանց էտիկետները նմանեցնել մեր էտիկետներին։ Այդ պատճառով մենք զգուշացնում ենք մեր ֆիրմայի ծխախոտ առնողներին ուշադրութեամբ նայել մեր ֆիրմայի էտիկէտներին, որպէս զի չը խաբվին, ու չառնեն խարդախած և Տէր-Գրիգորեանցի կեղծ էտիկէտով ծխախոտը։ Այդ խարդախված ծխախոտի համար, որ կրում է մեր կեղծ էտիկէտը, մենք պատասխանատու չենք։»

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են, որ այս օրերս սրբազան Գէորգ Սուրէնեանց այստեղ մայր-եկեղեցում քարոզ խօսեց, յորդորելով ժողովուրդը հանգանակութիւն անել յօգուտ Զէյթունի հրկիզեալների։ Սրբազանի նախագահութեամբ կազմվել է այդ նպատակով մի յանձնաժողով քաղաքի անուանի անձինքներից, որոնք, ինչպէս լսվում է, աջողութեամբ առաջ են տանում հանգանակութեան գործը։

—

Գերմանացի պիանիստ Ալֆրէդ Բէյզընաուէր, որ այժմ կոնցերտներ է տալիս Թիֆլիսում, ծընվել է 1863 թվին, ուրեմն նա այժմ 24 տարեկան է։ Զը նայելով որ նա այդքան երիտասարդ է, Բէյզընաուէր արդէն իր ածելով մեծ հռչակ է ստացել Եւրօպայում և այժմ շատ տեղ համարվում է առաջնակարգ պիանիստ։ Նա արդէն կոնցերտներ է տուել Հռոմում, Վիէննայում, Պեշտում, Լոնդոնում, Ստոկհոլմում, Բերլինում և այլն։ Պետերբուրգում և Մոսկվայում նա ահագին աջողութիւն ունեցաւ։ Բէյզընաուէր երևելի Լիստի աշակերտ է և նրան ամենից լաւ աջողվում է Լիստի պիէսների ածելը։ Թիֆլիսից Բէյզընաուէր գնալու է Բաղու, իսկ առաջիկայ 1888 թվին նա հրաւիրված է Ամերիկա, որտեղ նրան երաշխաւորում են 5000 ֆրանկ իւրաքանչիւր կոնցերտից։

—

Վարշավայում հրատարակվող լեհական գիտական-գրական «Ateneum» ամսագրի վերջին տետրակում զետեղված է մի յօդուած «Literatura Ormianska» (Հայոց գրականութիւն) վերնագրով։ Յօդուածագիրը «Մշակի» ընթերցողներին ծանօթ Արթուր Լէյստն է։ Յօդուածի սկզբում պ. Լէյստ յայտնում է իր կարծիքը մեր հին գրականութեան վրա, խօսելով Մովսէս Խորենացու, Եղիշէի, Դաւիթ Անյաղթի, Գրիգոր Մագիստրոսի, Ներսէս Շնորհալու և այլոց վրա։ Ապա պատմելով Մխիթար Սեբաստացու կեանքը, յօդուածագիրը անցնում է մեր նոր գրականութեան զանազան ճիւղերին, խօսելով մեր նշանաւոր քերթողների, վիպասանների, թատերագրողների վրա։ Այդտեղ նա խօսում է Սունդուկեանցի, հայր Բագրատունու, Պռօշեանի, Պատկանեանի, Րաֆֆիի, Շիրվանզադէի մասին (ասելով որ նա իր վէպերում կովկասեան փոքր կրեսոսներին է մտրակում), հարևանցօրէն յիշում է և Միքայէլ Նալբանդեանցի բանաստեղծութիւնները, և այլն։ Յօդուածը վերջանում է հայոց լրագրութեան վրա մի տեսութեամբ։ Պէտք է խոստովանվել, որ պ. Լէյստի այդ յօդուածը, ինչպէս և նրա «Litterarische Skizzen»-ը, կրում է մասամբ ֆելիետօնական բնաւորութիւն։

—

Ստացանք Թիֆլիսաբնակ պ. Եպգոր Զոհրաբեանից 25 ռուբլի յօգուտ Զէյթունի հրկիզեալների, որը խմբագրատանը եղած 61 ռուբլու հետ միասին, կը կազմի ընդամենը 86 ռուբլի։

—

Շուլավէրից մեզ գրում են։ «Ռուսաց «Новое Обозрѣніе» լրագրի № 1382-ում Շուլավէրից հաղորդած լուրը մեր տանուտէրի վերաբերեալ բոլորովին սխալ է։ Ընդհանուր ժողովի ժամանակ ոչ ոքին չեն խփել և ոչ ոք էլ չէ հիւանդացել։»

—

Շուլավէրից մեզ գրում են։ «Մինչև 1880 թվականը մեր գիւղը ունէր ցորենի հասարակաց շտեմարան, սով տարիների համար, որ պարունակում էր իր մէջ 700 թաղար ցորեն (7000 պուդ)։ Ափսոս որ յայտնի չէ թէ ուր է գտնվում այժմ ցորենի այդ քանակութիւնը։ Ցանկալի կը լինէր որ մերտանուտէրը աշխատէր կրկին նորոգել այդ օգտաւէտ հիմնարկութիւնը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԲԻՍՄԱՐԿ

—

Նոր տարվայ (նոր տօմար) տօների տուիթով եւրօպական մամուլի մի մասը՝ մի առանձին ոգեորութեամբ ձգտում է խաղաղութիւն աւետել հասարակաց կարծիքին, և աշխատում է քաղաքականութեան մօտիկ ապագայում ոչինչ վտանգներ չը տեսնել։ Այդ ոգով են խօսում գերմանական շատ լրագիրներ, բայց դրա հակառակ, ֆրանսիական մամուլը քաղաքական դրութիւնը շատ վտանգաւոր է գտնում, և դրա պատճառ համարում է իշխան Բիսմարկին։ Եւրօպայի յուզման պատճառը, ասում են ֆրանսիական շատ լրագիրներ, իշխան Բիսմարկի քաղաքականութիւնն է. ոչ մի ուրիշ պետութիւն բացի Գերմանիայից պատերազմական արշաւանքներից և պատերազմական խառնակութիւններից մի առանձին օգուտ չէ սպասում։ Աւստրիան շատ լաւ գիտէ, որ հէնց առաջին անջողութիւնը կարող է փշրել իր այժմեան կազմը. բայց չը նայած դրան, աւստրիական դիպլոմատները իշխան Բիսմարկի հլու հետևողներն են դարձել, որը ստիպեց այդ պետութեանը անպատճառ պատերազմական պատրաստութիւններ տեսնել։ Կազմակերպելով մի այնպիսի պետութիւն, որպիսին է այժմեան գերմանական դաշնակցութիւնը, իշխան Բիսմարկ մտածում է ամրապնդել նրան նոյն իսկ ապագայի վտանգների համար, և այդ նպատակով նա այնպիսի դաշնակցութիւն է կազմում, որը պէտք է աւելի ոյժ տայ Գերմանիայի պատերազմական գերիշխանութեանը։ Այդ գերիշխանութեան գլխաւոր գրականներից մէկը, ֆրանսիական մամուլի մի մասի կարծիքով, Ֆրանսիայի թուլանալն է։ Այդպիսի հայեացք ունենալուց յետոյ, հասկանալի է թէ ինչ աղմուկ կը հանի այն լուրը, որը հաղորդում է թէ Բիսմարկ առաջարկել է Շվէյցարիային միանալ երեք պետութիւնների դաշնակցութեանը, որը աւելի է վրդովեցնում խաղաղութեան բարեկամներին, և յոյս չի տայ, թէ նոր տարին կարող կը լինի վերջ տալ քաղաքական յուզմունքներին, թէև շատ պետութիւնների ներկայացուցիչները՝ նոր տարվայ առիթով յայտնած շնորհաւորութիւններով, խաղաղութեան մասին մեծ-մեծ յոյսեր են յայտնում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 7 դեկտեմբերի

Այստեղ շատ անձկութիւն կը տիրէ Խրիմեան Հայրիկի հիւանդութեան մասին։ Մօտ տասը օրէ

վէպ գրելը միայն այս ձևով կարելի է.... Դա է մեր իրական կեանքը։

Երբ իդէալական սէր չը կայ կեանքի մէջ, նա չէ կարող գոյութիւն ունենալ և վէպերում։

Եւ չը կայ էլ։ Քրքրեցէք մեր բոլոր վէպերը, բացի օտար դրականութիւնից թարգմանվածներից,—և ամեն տեղ կը գտնէք՝ կոպիտ, անտաշ, նիւթապաշտ սէր։ Կամ եթէ հեղինակը ջանում է իդէալական սէր դուրս բերել, այն աստիճան անշնորհ կերպով է նկարագրում այդ սէրը, որ այդ իր նկարագրած սէրը անբնական, շինծու է երևում մեզ։

* * *

Ցօները հասան. Թիֆլիսի քնած, մեռած, անտարբեր կերպարանքը քիչ կենդանութիւն առաւ։ Ամենքը յուզվում են, շտապում են փողոցներում մանգալիս, խանութներ մտնում, այլ և այլ իրեղէններ առնում։ Գրքերի խանութները, որոնք տարին տասներկու ամիս դատարկ են, այժմ լի են այցելուներով. ծնողները մանկական գրքեր են առնում իրանց զաւակների համար։ Բանկերը լի են, մօդային խանութները լի են, ուտելեղէնների մագազինները լի են, նոյն իսկ խմբագրատները լի են այցելուներով,—մարդիկ մտնում, դուրս են գալիս, լրագրին են գրվում եկող տարվայ համար....

Եւ որովհետև քաղաքականական օրէնքով, երբ մի բանի վրա աւելի մեծ պահանջ կայ, գներն էլ դրա վրա բարձրանում են, մեր Թիֆլիսի վաճառանոցի վրա էլ բոլոր գները այս բոպէիս բարձրանում են....

* * *

Ահա մօտաւորապէս ինչ են այս բոպէիս ամենանհրաժեշտ կենսական պիտոյքների գները Թիֆլիսի վաճառանոցի վրա։

* * *

Թխած հացի փունտը, լաւը՝ 5 կոպէկ։

Ալիւրի պուդը 1 ր. 20 կ.

Մսի փունտը 8 կոպ։

Բարեգործական նպատակով տրվող կոնցերտների տոմսակը 1 ռուբլուց մինչև 5 ռուբլի (պահանջը մեծ է)։

Բարեգործական նպատակով տրվող պարահանդէսների տոմսակները 1 ռուբլուց մինչև 5 ռուբլի (պահանջ չը կայ, բայց տոմսակները իրանք իրանց են դալիս)։

Հայոց լրագիրների տարեկան բաժանորդագնի անդորրագիրը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլի (քանակութեամբ, ազէնտների ձեռքից առնողների համար՝ զիջում կը լինի)։ Պահանջը շատ թոյլ է։

Օպէրայի տոմսակների գները 30 կոպէկից մինչև 10 ռուբլի (պահանջը մեծ է)։

Ֆօրկատոլի թատրոնի տոմսակների գները վաճառանոցում ամենևին չը կան (յայտնի չէ՝ արդեօք բոլորը ծախված են, թէ պահանջ ամենևին չը կայ)։ Տրամադրութիւնը հանդարտ է։

Պակվկու հայ օրիորդների բաժինքը 5 հազարից մինչև 10 հազար ռուբլի (տրամադրութիւնը տօների պատճառով ամրանում է)։

«Հայոց թարգմանական» ընկերութեան հրատարակած գրքերը ամենևին դին չունեն և չը կան քաղաքի վաճառանոցում։ Սպասում են որ մեր մէջ վերածնվի չորրորդ և հինգերորդ դարերի տրամադրութիւնը և սէրը դէպի գրաբարը։

Մեծ պահանջ կայ դէպի հայոց թատրոնի տոմսակները, բայց այդ տոմսակները վաճառանոցում չեն գտնվում։ Այստեղից արտահանվում են մեծ քանակութեամբ դէպի Բաղու, Օդէսա և ուրիշ քաղաքներ։

Զէյթունի հրկիզեալների օգտին նուիրված փողերի հետքը չէ երևում։ Վաճառանոցը դատարկ է դրանցից։

* * *

Զարմանալի ձմեռ է անում մեզ մօտ այս տարի. մինչդեռ Եւրօպայում սաստիկ ցուրտ է տիրում, Նիցցայում, հարաւային Ֆրանսիայում և հիւսիսային Իտալիայում մեծ ձիւն է գալիս, Վիէննայի և Պեշտի մէջ երկաթուղու գնացքների երթևեկութիւնը ընդմիջվել է ձիւների պատճառով, մեզ մօտ ամենևին ձիւն չը կայ։ Միայն դեկտեմբերի 24-ին փոքր ինչ ձիւն եկաւ Թիֆլիսում։

Բայց առհասարակ շատ չոր եղանակ է անում մեզանում. Անդրկովկասեան երկաթուղին շատ կանոնաւոր կերպով բանում է և Թիֆլիսից մանաւանդ դէպի Բաղու գնալը շատ հեշտացել է։

Բաղդաւոր, նախանձելի Բաղու, նաւթով և փողերով հարուստ Բաղու,—ամեն մարդուն որ փողի հարկաւորութիւն ունի, գրաւում ես դէպի քեզ։

* * *

Բայց բաւական է. այսօր աւելի երկար գրել չեմ կարող, շատ զբաղված եմ.... Ամեն օր հրաւիրված եմ լինում իմ ծանօթների հարսանիքներում.... Այժմ օր չէ անցնում որ հարսանիք չը լինի. իսկ ես անթիւ, անհամար ծանօթներ ունեմ, ինչպէս և վայել է ֆելիետօնիստին։

* * *

Գուցէ մինչև նոր տարին այլ ևս չենք տեսնվի ձեզ հետ, ընթերցող, ուրեմն վերջացնում եմ ֆելիետօնս, ձեզ «շնորհաւոր նոր տարի» ասելով։

Ասիացի

նորին սրբազնութիւնը ծանր բռնչիթով մը պառկած է. կը խնամեն զինքը ճարտար բժիշկներ, սակայն կը վախցուի որ հիւանդութիւնը վտանգաւոր լինի գուցէ։

Թէպէտ Խրիմեան Հայրիկ քաջառողջ է, բայց ոչ ցուրտ կը նայի, ոչ տաք. ամեն ուրեք է. և Գոլիս, որ օր մը տաք կընէ, օր մը ցուրտ, վըտանգալից է անխոհեմներու համար։ Խրիմեան Հայրիկ պարտաւոր է աշխատել ոչ թէ ապրելու համար, այլ ապրեցնելու։ Պ. Փիրումեանի գրքոյկին առթիւ կը գրէք թէ Հայրիկի գործերն պէտք է խօսել. իրաւունք ունիք, սակայն անհնարին է թուել Հայրիկի ամեն աւուր բարութիւններն. չը կայ պանդուխտ քահանայ մը, որ չը դիմէ իրեն, ամեն թղուառ, մանաւանդ հայաստանցիներն ամեն օր Հայրիկին քով են. միոյն դեղի տակ, միւսին բժշկի տակ, այս ինչը իր հայրենիք խրկելու է, այն ինչը հայրենիքէն բերեցած է, խեղճ է, փող չունի. ամենքն Հայրիկը պիտի հոգայ. շատ օր կը պարպէ գրպանը և երեկոյին կը մնայ առանց մի կօպէկի։ Ո՛չ հաշիւ ունի, ոչ տետր արձանագրելու համար իւր տուած փողերը—ոչ ինք գիտէ, ոչ ոք։ Կրնայ ըսել թէ շատ տակ կառնէ, իրեն համար ծախս չընէր (գրեթէ ցերեկները միայն պանիր ու հաց կուտէ) և տակ մը չունի, այլ պարտք։

—

12 դեկտեմբերի

Իրաց վիճակին մէջ չը կայ ո և է փոփոխութիւն։ Այս շաբթու պետական խորհուրդը ոկսաւ քննել Պատրիարքի հրաժարականին պատճառ եղող խնդիրները։ Պետական խորհրդոյ օրէնսդրական ճիւղին յանձնուած է գործն։ Այդ ճիւղին մէջ երկու հայեր կան՝ մին Ապրօ էֆէնդի, միւսը Նուբեան էֆէնդի, ոյք պիտի պաշտպանեն հայոց Պատրիարքի դատը. սակայն թէ դատական գործոց Նախարարի որդին և թէ Շէյխ-իւլ-իսլամի որդին անդամ են այդ ժողովին և շատ հակառակորդ մեր պահանջներուն. խնդիրը գուցէ երկարի. Կրօնական ժողովը այս պարագային մէջ որոշած է դիմել ուղղակի Սուլթանին։ Եւ արդարև սպասելու ժամանակ չը կայ։ Գաւառներէն անագին քանակութեամբ խնդիրներ եկած են. ամեն ուրեք անիշխանութիւն հայոց գործերուն մէջ—ոչ Պատրիարք կայ, ոչ Քաղաքական ժողով. Կրօնական ժողովն ինքնին ոչինչ կրնայ ընել։

Կրօ. ժողովը և ոչ իսկ կարող է միջամտել այն ձերբակալութեանց, ոյք այս օրերս տեղի ունեցան։ Այս շաբթու երեքշաբթի օր, գիշերուան դէմ ոստիկանութիւնն երթալով Պոլսոյ կողմն անմիջապէս բռնեց վանեցի մի քանի երիտասարդներ և ծերեր։ Թէյավաճառ Խաղուլեան եղբայրը, օղապաշը Թաշ Վարդան, Թէրլէմեզեան, Աղունեան օղապաշք։ Ասոնց բոլոր գոյքը, թուղթերը դրաւուեցան, և իրենք ալ զինուորական հսկողութեան ներքև տարուեցան Եըլդըզի թագաւորական պալատը։ Այժմ ամեն մէկն առանձին առանձին բանտերու մէջ են և հարցաքննութեանց ենթարկուած։ Որոշ չը գիտցուիր թէ ինչ է այս տարօրինակ խստութեան պատճառը։ Կը կարծուի թէ երկու կարգ ամբաստանութիւն կայ վրանին. նախ թէ՝ կաջակցեն արտասահման հրատարակուող (ի Մարսէյլ) հայերէն թերթի մը. թէ Վանայ մէջ բանտարկուած Թոխմախեան Արսէն վարդապետին հետ յարաբերութեան մէջ դտնված են։ Այդ կասկածները տարակոյս չունեն թէ անհիմն են, բայց տեսնենք։

Այս ձերբակալութեանց առթիւ այստեղ բաւական երկիւղ կը տիրէ, վասն զի անդամ մը որ ձերբակալութիւնք սկսին, չենք գիտեր վերջն ուր կերթայ։

Խրիմեան Հայրիկ տակաւին անհանգիստ է բաւական տառապեցուցիչ կերպով։

Հայկակ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Մօնպէլիէ, 12 դեկտեմբերի

«Մշակի» № 116-ի մէջ մի քանի տեղեկութիւններ էի հաղորդել տեղիս երկրագործական ուսումնարանի մասին և ի միջի այլոց համառօտ կերպով բացատրել էի, որ օտարներիս համար գիշերօթիկ լինելը մեծ առաւելութիւններ ունի, թէ լեզուի ուսումնասիրութեան և թէ ծախսի տեսակէտից։ Ահա այն տողերը, որոնք վերաբերում են ծախսին՝ «Ծախսի տեսակէտից դարձեալ գիշերօթիկ լինելը ձեռնտու է, որովհետև եթէ 1,000 ֆրանկից (գիշերօթիկների տարեկան վարձն է) հանենք 200 ֆ. ուսման վճարը, այն ժամանակ դուրս կը գայ, որ ուսանողը իր բնակարանի, մննդի, լուացքի, լոյսի և վառելիքի համար վճարում է 800 ֆ. այսինքն ամիսը մօտաւորապէս 67 ֆ. այն ինչ մի և նոյն պահանջների համար քաղաքում. ապրողը, որը օրը մի անգամ է միայն ճաշում, կը ծախսէ ոչ պակաս քան 80 ֆ.։

Ահա այս կախարդական 80 թիւն է, որ ինձ ստիպում է մի և նոյն նիւթի վրա երկրորդ անգամ խօսել, որպէս զի ով որ չէ հասկացել, հասկանայ, թէև մի և նոյն ժամանակ և ստիպված եմ ձանձրացնողի անախորժ պաշտօնը յանձն առնել նրանց վերաբերմամբ, որոնք արդէն հասկացել են, որոնց համար և նախօրօք ներողութիւն եմ խնդրում ընթերցողից։

Հէնց մի և նոյն օրը, երբ «Մշակի» № 116 հասաւ տեղս, մեր ընկերներից մէկը նամակ է ստանում իր հօրից, ինչպէս յիշել էր պ. Խան-Ազատեան «Մշակի» № 134 տպված իր նամակում, որտեղ նա, այսինքն ուսանողի հայրը, բացատրութիւն է պահանջում թէ ինչու և մինչև այժմ 130 ֆ. է ստացել ամիսը, այն ինչ 80 ֆրանկով էլ կարելի է ապրել։ Դրա յաջորդ օրը մի այլ ուսանող ևս նոյնանման մի նամակ է ստանում իր հօրից։

Իմ ստացած մանաւոր նամակներից ևս պարզ երևում է, որ շատերին է մոլորեցրել 80 թիւը և շատ շատերը չեն կարողացել այդ պարզ միտքը հասկանալ, որի համար միայն հարկաւոր է մի փոքր ուշադրութեամբ կարդալ։ Մեր ընկերների ստացած նամակները իրանց անմիտ պահանջով այնքան անմեղ են, որ մարդ փոխանակ վշտանալու, ակամայից սկսում է ծիծաղել։

Նախ—այդ պարոնները ինձ չեն հասկացել. ես երբէք չեմ ասել թէ 80 ֆրանկով այստեղ կարելի է ապրել, այլ, ինչպէս ընթերցողն էլ կարող է տեսնել իմ յօդուածից բերած մի կտորից, ես ասել եմ որ բնակարանի, մննդի, լուացքի, լոյսի և վառելիքի պահանջների համար, ուսանողը, որը օրը մի անգամ է միայն ճաշում, կը ծախսի ոչ պակաս քան 80 ֆ.։

Երկու տող վերև յիշել եմ, որ այդ 80 ֆ. մէջ ուսումնարանի վճարը չէ մտնում, որը 17 ֆ. աւելի է ամիսը։ Եւ միթէ դա մի շատ դժուար հասկանալու բան է, որ բնակարանից, մննդից, լուացքից և վառելիքից զատ կան և այլ անհրաժեշտ ծախսեր, ինչպէս ուսումնարանի վճարը, ճանապարհորդութեան ծախսը, շորեր, գրքեր, կօշիկներ և այլն։ Եթէ 80 ֆրանկի վրա աւելացնենք 17 ֆ. ուսման վճարը և միւս ծախսերը, դուրս կը գայ, որ ուսանողին դեռ համեստ ապրելու համար անհրաժեշտ է ամիսը 130—150 ֆրանկ։

Բացի այդ ես յիշելով 80 ֆրանկը, ոչ թէ նպատակ եմ ունեցել երթևեկի մանրամասն ծախսերի հաշիւը ներկայացնել, այլ գիշերօթիկի առաւելութիւնը ցոյց տալու համար։ Եւ վերջապէս միթէ կարելի է պահանջել, որ բոլոր ուսանողները էլ 80 ֆ. կամ 300 ֆրանկով ապրեն։ Թող ուսանողների հայրերը համեմատեն իրանց ընտանիքի ծախսերը մի աղքատ և մի իրանցից աւելի հարուստ ընտանիքի ծախսերի հետ։ Այդ պարզ համեմատութիւնից կը տեսնեն, որ իրանց պահանջը անիրաւացի է։

Ուսանողի հայրը կատարեալ իրաւունք ունի յորդորելու իր որդուն և մինչև անդամ պահանջելու, որ նա որքան կարելի է չափաւոր լինի իր ծախսերում և ոչ թէ պահանջել, որ նա էլ այնքանով բաւականանայ, որքանով բաւականանում է մի ուրիշը։ Միթէ ուսանողի հայրը իրաւացի կը գտնէր նոյնանման մի պահանջ իր որդու կողմից, եթէ վերջինս ասէր՝ «հայր, իմ ընկերներից մէկը կամ շատերը ստանում են ամիսը 200 կամ 300 ֆրանկ, ապա ինչու մինչև այժմ դու ինձ 130 կամ 150 ֆրանկ ես ուղարկում։ Բնականաբար հայրը կը պատասխանէր, որ նրանք աւելի հարուստ են և աւելի նիւթական միջոցներ ունեն, քան թէ մենք։

Ահա այդ դէպքերից յետոյ, երբ տեղիս ուսանողներից 2-ը իմ նամակիս պատճառով իրանց հօրից նախատական նամակներ էին ստացել, մեր յարգելի ընկեր պ. Խան-Ազատեան այնքան բորբոքվեցաւ դրանց վարմունքի դէմ, որ նոյն օրը և եթ մի նամակ գրեց «Մշակին», որտեղ խիստ կերպով յարձակվում է նրանց վարմունքի դէմ։

Բայց, տարաբաղդաբար, պ. Խան-Ազատեանցին էլ չեն հասկացել, ինչպէս այդ երևում է իմ վերջերումս ստացած նամակներից, և նրա նամակը համարում են իմ նամակիս դէմ գրած, այն ինչ նա աւելի պաշտպանում է իմ յայտնած մտքերս, իսկ այդ սխալ կարծիքը առաջացել է նրանից, որ պ. Խան-Ազատեան փոքր ինչ անորոշ ոճ է գործածում, թէև ուշադրութեամբ կարդացողը կարող էր իսկոյն ըմբռնել։

Բացի այդ, իմ ստացած մի նամակում ի միջի այլոց ես յիշված է թէ «ինչպէս երևում է այդ պ. Խան-Ազատեան չռայլ տղայ է»։ Բայց որպէս զի ուրիշներն էլ այդ սխալ կարծիքը չը կազմեն մեր յարգելի ընկերոջ վրա, ես իմ սրբազան պարտքս եմ համարում յայտնել ի գիտութիւն ամենեցուն, որ պ. Խան-Ազատեան ոչ միայն չռայլ տղայ չէ, այլ դեռ շատ ու շատ զրկանքներ կրելով ապրող ուսանողներից է։

Շտապում եմ վերջացնել նամակս, խնդրելով որ արտասահման դալ ցանկացողները թող լաւ ուշադրութեամբ կարդան այդ յօդուածները, նոյնպէս չը կարծեն թէ այդ յօդուածներում յիշված թիւերը աւելացրած են, ընդհակառակը այդ թիւերը հանուստ կեանքի ծախսի ճիշդ մաթէմատիկան հաշիւ են ներկայացնում։

Յարգոյ խմբագիր, յոյս ունեմ որ ներողամիտ կը դտնվէք և տեղ կը տաք իմ նամակիս ձեր պատուական լրագրի էջերում, որով նպաստած կը լինէք սխալ կազմուած կարծիքները փարատելուն։

Մ. Մուսինեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սոֆիայից հեռագրում են, որ պրինց Ֆերդինանդի կարգադրութեամբ Լիւտիխում պատուիրված է 50,000 մագաղինային հրացաններ՝ որոնք Բօլդարիա պէտք է ուղարկվեն դալ տարվայ մարտ ամսին։

—Գերմանական թագաժառանգի առողջութեան մասին Սան-Ռէմօից եկած լուրերը հաղորդում են, որ հիւանդութիւնը այլ ևս վտանգաւոր կերպարանք չունի և դուցէ թագաժառանգը շուտով բոլորովին կառողջանայ։

—Պատերազմական պատրաստութիւնների համար հոդում է և Յունաստանը, որը մինչև այժմ կարծէք չէզոք էր եւրոպական պատերազմական տագնապից։ Յունաց կառավարութիւնը մտադիր է ազգային ժողովին դիմել և առաջարկել, որ պատերազմական ծախսերի համար յատուկ գումար որոշվի։

—Փարիզից հաղորդած լուրերը ցոյց են տալիս, որ Վիլսօնի գործի մէջ, որը մեղադրվում է շքանշաններ վաճառելում, խառն են և ուրիշ շատ անձինք, որոնք մինչև այժմ չէին էլ կասկածվում։ Այդ առիթով դատի են կանչվել շատ անձինք, և մի քանի հոգի էլ ձերբակալվել են արդէն։

—«Paris» լրագիրը հաղորդում է հետևեալ դժուար հաւատալի լուրը, որ իբրև թէ իշխան Բիսմարկ առաջարկել է Շվէյցարիային միանալ երեք պետութիւնների դաշնակցութեանը, որպէս զի հարկաւոր ժամանակը թոյլ տայ իտալական զօրքերին անցնելու դէպի Ֆրանսիական սահմանները։ Դրա փոխարէն իշխան Բիսմարկ խոստացել է Շվէյցարիային տալ Ֆրանսիական երկու դաւառ։

—Վիէննայի լրագիրները խօսելով լօրդ Ջերչիլի Պետերբուրգ դնալու մասին, յարձակվում են նրա վրա, և այն միտքն են յայտնում, որ անդլիական պարլամենտի նշանակութիւնը ընկնում է, երբ բարձր քաղաքականութեան մէջ խառնվում են մասնաւոր անձինք։ Նոյն հարցի մասին խօսում է և «Times» լրագիրը, և այն կարծիքն է յայտնում, որ ռուսաց կառավարութիւնը լաւ կանի, եթէ մեծ հաւատ չընծայի Ջերչիլի յայտնած մտքերին, որը մի փոքր ժամանակ առաջ կատաղի թշնամի է եղել ռուսաց քաղաքականութեան։ Լրագիրը այն միտքն է յայտնում, որ որքան և խաղաղութիւնը ցանկալի լինէր, բայց և այնպէս Անգլիան չէ կարող միանգամայն հրաժարվել իր արևելեան քաղաքականութիւնից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ընթերցարաններից վերցվող գրքերը, ինչպէս յայտնվում է բժիշկների արած վերջին հետազօտութիւններից, այլ և այլ վարակիչ հիւանդութիւնների ամենահաստատ տարածողներն են։ Դոկտոր Սիմոն, Պետերբուրգում, բժշկելով նորերումս սկարլատինայով մի հիւանդին, նկատում է հիւանդի սեղանի վրա ընթերցարանից վերցրած մի գիրք։ Քանի մի օրից յետոյ բժշկապետը կանչվում է սկարլատինայով հիւանդացած մի այլ պացիէնտի մօտ և յանկարծ նկատում է այդ երկրորդ հիւանդի գրասեղանի վրա նոյն ընթերցարանից վերցրած նոյն գրքի հատորը։

* * *

Հարաւային-Կարօլինայում մի 17 տարեկան նեգրուհի հիւանդութիւնից յետոյ ընկաւ լետարգիական քնի մէջ։ Նրան մեռած համարեցին և տարան թաղելու. ճանապարհին դագաղից սկսեցին լսվել աղմուկ և հառաչանքներ։ Ներկայ եղողները զարմանքով բաց արեցին դագաղը և աւելի զարմանքով տեսան, որ հանդուցեալը ոչ թէ միայն կենդանացել է, այլ և երեխայ է ծնել։ Մայրը և երեխան կենդանի են մնացել։

* * *

Ի՞նչ էք կարծում, ընթերցող, քանի սիրահարական նամակներ կարող է գրել փեսացուն իր հարսնացուին։ Դժուար է այդ հարցին պատասխան տալ հայ երիտասարդ և օրիորդի վերաբերութեամբ, իսկ օտարների վերաբերութեամբ բաւական է յիշել հետևեալ փաստը։ Մասսաչուսետսում, նորերս դատարանում քննվող մի գործի ժամանակ կարդացվեցան 1,100 սիրահարական նամակներ, որ գրել էր փեսացուն իր հարսնացուին։

* * *

1888 թուին, ինչպէս ցոյց են տալիս աստղաբաշխական հետազօտութիւնները, Միջին-Եւրօպայում նկատելի կը լինեն լուսնի երկու կատարեալ խաւարում և արեգակի երեք մասնաւոր խաւարում։

* * *

Հնդկաստանում 1886 թուականի ընթացքում վայրենի գազանների և թունաւոր օձերի զոհ են դնացել 24,841 մարդ։

* * *

«Медицинское Обозрѣніе» հաղորդում է, որ Աւստրիայում նոր օրէնք է հրատարակված ծաղիկ պատուաստելու մասին։ Ծաղիկ կտրելը պարտադիր է յայտնված Աւստրիայում և ամեն մի երեխային կեանքի մէջ երկու անդամ պէտք է ծաղիկ կտրեն՝ առաջին անդամ երբ երեխան 1 տարեկան է, իսկ երկրորդ անդամ երբ նա 12 տարեկան է։ Ծաղիկը պէտք է պատուաստեն համայնական բժիշկներ, իսկ որտեղ այդպիսիներ չը կան, կառավարութիւնից դրա համար յատկապէս նշանակված բժիշկներ։ Ծաղկի հիմը պէտք է պատրաստվի առանձին հաստատութիւնների մէջ բժիշկների հսկողութեան տակ և հիմը ձրիապէս մատակարարելու է ինքն պետութիւնը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Կ. ՊՕԼԻՍ, 23 դեկտեմբերի։ Այստեղ հասած դիպլօմատիական տեղեկութիւններից երևում է, որ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնօ յանձնարարել էր Բիրլինի Ֆրանսիական դեսպանին, նոր տարվայ ընդունելութեան ժամանակ Վիլհելմ կայսրին հաւատացնել, թէ ինքն այնքան համոզված է խաղաղութեան անհրաժեշտութեան մէջ, որ քանի նա Ֆրանսիական հանրապետութեան նախագահ կը լինի, Ֆրանսիական ոչ մի մինիստրութիւն չի հետևի պատերազմական քաղաքականութեան։

ԼՕՆԴՕՆ, 23 դեկտեմբերի։ Ազգանական էմիրը դիմեց լօրդ Դիւֆֆերինին, խնդրելով ուղարկել իրան եւրօպացի սպայ՝ ազգանական զօրքերին վարժեցնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի։ Լրագիրները հաղորդում են, որ երկուշաբթի օր, պետական խորհուրդը հաստատեց լուցկիի վրա դրվող հարկը։

ՎԻԷՆՆԱ, 24 դեկտեմբերի։ Ռուսաց զինուորական դործակալ Զուեվ վերադարձաւ իր պաշտօնատեղին խաղաղասիրական յայտնութիւններով, որ շատ լաւ տպաւորութիւն թողեց։

ԿԵՕԼՆ, 24 դեկտեմբերի։ «Կեօլնի լրագիրը» հաղորդում է, որ նոր տարվայ առիթով Վիլհելմ կայսրին ուղարկած հեռագրի մէջ աւստրիացոց կայսրը ասում է. «Տայ Աստուած, որ քաղաքական դրութիւնը շուտով պարզվէր, որպէս զի մեր հպատակները կարողանային հանդստանալ և օգտվել խաղաղութեան բարիքներով։»

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Դեկտեմբերի 23-ին

Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ		$21^{3}/_{32}$	պէնս.	
— — Համբուրգի վրա	—	$178^{1}/_{8}$	պֆ.	
— Փարիզի վրա	—	223	սան.	
Ոսկի — արժէ	— . .	9	›	12 կ.
Մաքսային կուպոններ	— . .	182	›	›
Արծաթ — —	— . . .	1	›	32 ›
Բօրսային դիսկօնտներ	— . .	$5^{7}/_{8}$	և ›	$7^{0}/_{0}$ ›
Պետակ. բանկ. $5^{0}/_{0}$ տոմս 1-ին չրջանի		99	›	75 ›
— — — — 2-րդ	—	98	›	— ›
— — — — 3-րդ	—	97	›	75 ›
— — — — 4-րդ	—	97	›	75 ›

— — — — 5-րդ —	97	75	
— — — — 6-րդ —	97	75	
Նոր 4% փոխառութիւն	82	25	
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	97	75	
— — 2-րդ —	97	50	
— — 3-րդ —	97	25	
Ներքին 5% առաջին փոխառութ.	275	75	
— երկրորդ —	250	—	
5½% ըէնտա	103	—	
Ոսկեայ ըէնտա	194	50	
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն	163	75	
Նոր երկաթուղային ըէնտա . . .	98	—	
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	165	—	
Գրաւ. թղ. Ազնս. բանկի . . .	97	62	
5½% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.	99	12	
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101	62	
— — Պոլտավայի— —	101	12	
— —Պետ.Տուլակ.— —	101	50	
— — Կիևի — —	101	75	
— — Մոսկվայի — —	102	—	
— — Բեսարաբ. Տավր.—	101	25	
— — Նիժ. Սամար. —	101	26	
— — Վիլնայի —	101	—	
— — Թիֆլիսի—27 և 43 տ. —	—	—	
— —Քութայիսի-18 և 43 տ. —	—	—	
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները	725	—	
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	268	—	
Ռիբինսկ-Վոլոգդայի ընկ.	85	50	
Սանկտ Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	93	50	
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	93	50	
Օդէսայի — — .	93	62	
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	—	—	

Սանկտ Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ. Յով. Նազարեանց. Քաղաքային փոստով ուղարկեցինք ձեզ մի նամակ, երեք հատ փոստի մարկայով, որով խնդրում են ձեզանից մի հատ ձեր օրացոյցներից։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՎՍԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ ԾԱՏՈՒՐԵԱՆ և իր որդիք սրտի ցաւով յայտնելով, առաջինը իր ամուսնու և երկրորդները իրանց հօր, ԱՂԱԼՕ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին շնորհ բերել վաղը, կիրակի օր, ամսիս 27-ին, ժամը 10-ին առաւօտեան, հանգուցեալի յուղարկաւորութեանը, որ տեղի կունենայ իր բնակարանից (Պոլիցէյսկայա փողոց, Լազարեվի տուն), դէպի Վանքի մայր-եկեղեցին։

Հոգեհանդիստը կատարվելու է այսօր, ամսիս 26-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 5-ին։ 1—1

ԹԷԼԱՒԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՌՈՒՍԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ։ Շաբաթական 20—22 դասով, բաւարար ռոճիկով։ Յանկացողները պէտք է անմիջապէս դիմեն Թիֆլիսի Թեմական առաջնորդարանը։ 1—2

Երաժշտական արուեստի օր ըստ օրէ բարգաւաճանք, և հայկական-երաժշտական հրատարակութեանց զրեթէ բացարձակ պակասութիւն՝ քաջալերեցին զիս փորձել Երաժշտական Հայաստան (l'Armenia musicale) անունով պարբերական թերթի մը հրատարակութեան ձեռք զարնել, և որուն ցայտագիրը կը գտնեք 'ի հանդիպոյ։

Այս հրատարակութեան նպատակը շահագիտական չէ. իր միակ վախճանն է երաժշտական արուեստը ազնուացնել ու յառաջադէմ ընել՝ բնութեամբ ու աւանդութեամբ բանաստեղծ ու երաժիշտ ազգի մը մէջ, որուն հետ կապուած եմ մեծ համակրութեամբ։ Ցոյս ունիմ ու Ձեր Ազնուամեծար Տէրութիւնը՝ սիրալիր ընդունելութեամբ իր թանկագին պաշտպանութեան արժանաւոր պիտի ընէ իմ այս փորձս, որուն պիտի նուիրեմ գործունեայ աշխատանքս ու տակաւ հանձարս՝ որպէս զի նպատակիս պատկանաւոր լուրջ՝ օգտակար և ախորժական հրատարակութիւն մը ըլլայ։

„Երաժշտական Հայաստան" պարբերականը պիտի հրատարակուի 'ի Միլան՝ ամիսն երկու անգամ, մեծադիր։ Պարունակութիւնն է երաժշտական հատուածք՝ դաշնամուրի (pianoforte) վրայ առանձինն, և դաշնամուրի վրա ուրիշ զանազան գործեաց ընկերակցութեամբ խանդերգք, (fantasie), նուագակցութիւնք (sinfonie), հայկական պարերգք (danze, arie), մրմունջք (romanze).

Երաժշտական Հայաստան իր աշխատակիցներն պիտի ընտրէ իտալացի հռչակաւոր և ընտիր երաժիշտներէ. և պատիւ պիտի համարի յօժարակամութիւն ընդունիլ նաև հայ երգահանից մասնակցութիւնը իր թերթին։

Տարեկան ընկերագրութեան գինն է 8 ռուբլի թղթեայ կամ 20 ֆրանկ։

Ամեն թերթ պիտի ունենայ չորսէն մինչև ութ էջ երաժշտական կտորներ։

Պարբերականիս վարչութիւնն ու խմբագրութիւնն է 'ի Միլան (հետևեալ հասցէին. (Renchi Camillo, 20 Via S. Damiano, Milano). (Italia).

Հրատարակիչն է Cesare Airaghi, Via del Gallo, N. 4. Milano (Italia).

Բաժանորդագրինք կանխիկ են, կա՛մ ուղղակի 'ի Միլան, առ Պ. Ռո՛նքի Գամիլլոյ, և կամ առ խմբագրութիւնս „Մշակ" և „Աղբիւր" հայ պարբերականաց 'ի Թիֆլիս. (Tiflis, Caucaso).

Առաջին տետրակը լոյս կը տեսնի փետրվար ամսին 1888 թուին

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Ուրբաթ, 1/13 յունվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս գնայ շոգենաւ LA SEYNE (ԼԱ ՍԷՅՆ) նաւապետ LUGAN (ԼՈՒԳԱՆ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, 'ի ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։ 2—3

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ։

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

Գործարան Գ. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԷՐԱ կոչված թաղում։ 10—50

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ եղել է աշակերտ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՈՐԾ ՈՒՆԵՆԱԼ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ։ Ցանկացողները իրանց հասցէն կարող են թողնել «Մշակի» խմբագրատանը 1—5

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅԻ հոգաբարձական խորհրդարանի մէջ յունվար ամսի 13-ին 1888 ամի, երեկոյեան 8 ժամին, կը լինի ածուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու նորակառոյց 18 կրպակները իրանց նկուղներով, որոնք գտնվում են III Աղէքսանդրեան թաղում, կուզնեցկի փողոցում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից առաւօտեան 10—12 ժամ։

Հոգաբարձու Մ. Թամամշեանց

1—3

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԵՆՍԿԻ

Բժշկում է հիկոպրականութեամբ,—ֆարադէյական և գալվանական հոսանքով՝ ձեռքերի և ոտքերի անդամալուծութիւնը, ջղային հիւանդութիւնները, ревմատիզմ, կոնտրակտուրա (ջղերի բռնվելը), նոյնպէս կոյրերին, խուլերին և համրերին անդամալուծութիւնից։

Բացի սրանից բժշկում է կանացի և սիֆիլիտական հիւանդութիւնները։

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 և երեկոյեան 7 ժամից մինչև 8. Վոլոնցովսկայա Նաբերեժնայա, Տէր-Օհանեսովի տանը։ № 5.

3—4 (Շ. Հ)

ПОДПИСКА НА

„ТРУДЫ"

Кавказскаго Общества Сельскаго Хозяйства

1888 года,

выходящіе ежемѣсячно и посвященные нуждамъ кавказской сельскохозяйственной промышленности,

ПРИНИМАЕТСЯ ВЪ ТИФЛИСѢ,

въ канцеляріи Кавказскаго Общества Сельскаго Хозяйства, что на Барятинской улицѣ, въ Александровскомъ саду. Подписная цѣна изданія за годъ ЧЕТЫРЕ РУБ. съ пересылкою во всѣ города Россійской имперіи и доставкою на домъ. Отдѣльные номера не продаются. Для напечатанія въ „Трудахъ" принимаются сельско-хозяйственныя объявленія, по соглашенію съ бюро Общества. 2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, յունվարի 7-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, Նախկին Արծրունի դպրեվանքում, № 103. 2—4

ՎԷՌՆԻՃԻ, ԶՄՈՒՌԻ ԵՒ ՓԱՅԼԱՆԵՐԿԻ

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Սրանով պատիւ ունի յայտնելու պ.պ. առևտրականներին և վէռնիճի (լակի), զմուռի և փայլաներկի (պոլիտուրա) գործածողներին, որ ունի յիշեալ ապրանքների բոլոր տեսակները, որոնք յետ չեն մնում միւս գործարաններից, ինչպէս իրանց մաուչելի գնով, այնպէս էլ իրանց լաւ յատկութեամբ։ Պատուէրները ընդունվում և կատարվում են անմիջապէս։

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԱՐՍԵԼԸ ԵՒ ԿԱՊԵԼԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ԽՆԱՄՔՈՎ. ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏԻ ԱՆՄԻԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՑ։ Մանրամասն պայմանները նշանակված են պրէյս-կուրանտի մէջ, որը տրվում և ուղարկվում է ձրիաբար։ Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են ամենայն ճշդութեամբ և անյապաղ։ Գործարանը և պահեստը գտնվում են Ելիզավետինսկի փողոցի վրա, տուն Զիլթախանի, № 25։

Հասցէն. Тифлисъ, Самуилу Леонтьевичу Ходорскому.

4—20 (Շ)

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԽԵԱՆՑԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվէյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում։ Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար։ Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնտու պայմաններով փող կը տայ 'ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցէով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie МИЛАНЪ (Италія).

Дозволено цензурою. Тифлисъ 25 декабря 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.